Արձանագրություն N 3
ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/10 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 29 նոյեմբերի 2017թ
ժամը 12:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Ստեփանյանը
անդամներ՝ Ն. Հովհաննիսյանը, Ա. Ասատրյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Մ. Ստեփանյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
Հրավերով սահմանված ժամկետում «Ռեաքիմ» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Մասնակցի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձանաժողովը որոշեց.
ա/ «Ռեաքիմ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.
ա/ «Ռեաքիմ» ՍՊԸ -ին ընտրված մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ չափաբաժինների համար:
Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ա. Ասատրյան)

5. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմաններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Մ. Ստեփանյան

անդամներ՝ _____ Ն. Հովհաննիսյան

_____ Ա. Ասատրյանը

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան